№ 99 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 1 — 1900 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 1 № 99

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԱՆԱՋՈՂ ՓՈՐՁ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Մաղկաձորից. Նամակ Կօջօրից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքիա. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Խրիմի ափերից.

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԱՆԱՋՈՂ ՓՈՐՁ

Մի իրատական դաս տուեց մայրաքաղաքի քաղաքապետը քաղաքային վարչութեան եւ դումային: Նա չը համաձայնվեց սահմանափակելու մամուլի մէջ երեւացող քննադատութիւնները քաղաքի առողջապահական դրութեան մասին:

Պետերբուրգի դուման երկու տարի սրանից առաջ դիմել էր քաղաքապետին մի թղթով, որով խնդրում էր արգելել լրագիրների մէջ այն յօդուածները, որոնք ներկայացնում են տների առողջապահական աննպաստ պայմանները՝ մինչեւ որ չը կայանայ նրանց մասին դատաստանական որոշում: Քաղաքապետը ընթացք չէր տալիս այդ խնդրին, իսկ երբ քաղաքային ուղրաման նորերս յիշեցրեց տուած խնդրի մասին, այն ժամանակ քաղաքապետը պաշտօնական դրութեամբ մերժեց դումայի խնդրածը:

Քաղաքային դումայի վերջին նիստում, երբ զեկուցվեց քաղաքապետի պատասխանը, ձայնաւորներից մի քանիսը հարց տուին՝ թէ ինչ իրաւունքով քաղաքը պէտք է ճնշէ մամուլի եւ նրա գործողների ազատ քննադատութեան իրաւունքը, քանի որ մամուլը եւ նրա գործողները իրանց գործունէութեամբ ամենեւին ենթակայ չեն քաղաքային ինքնավարութեան իրաւասութեանը եւ ներկայանում են իբրեւ մասնաւոր գործողներ ընդհանուր քաղաքացիական իրաւունքներով: Բայց որ աւելի ցաւալին է, այդ այն է, որ մամուլի քննադատութեան շնորհիւ մերկացրած զեղծումները, ինչպէս պարզվեց, վերաբերում են ուղղավայի անդամների մօտ մարդկանց եւ ուրեմն մամուլի ձայնը նախ եւ առաջ աչքի փուշ է եղել քաղաքային ինքնավարութեան ներկայ գործողների համար:

Քաղաքապետի պատասխանը շատ դեղեցիկ տպաւորութիւն է թողել մայրաքաղաքի ազգաբնակութեան վրա եւ մամուլը հրճուանքով արձանագրում է այդ իրողութիւնը: Այդ պատասխանը խրատական թող լինի եւ դաւառական քաղաքային ինքնավարութեան մէջ գործողների համար, որոնք երբեմնապէս ձգտումներ են ցոյց տուել արգելելու ազատ քննադատութիւնը եւ լռեցնելու մամուլի ձայնը:

Անշուշտ մամուլի քննադատութեան մէջ կարող են պատահել չափազանցութիւններ եւ սխալներ. բայց այդ թերութիւնները կարող են ուղղվել հէնց նոյն մամուլի միջոցով. իսկ այն մեծ վնասը, որ առաջ կը դայ ազատ քննադատութեան ձայնը խեղդելուց, շատ մեծ է եւ էական եւ չէ կարող հաւասարակշռվել ոչ մի կողմնակի առաւելութիւններով: Ցաւալի է, որ ազատ քննադատութեան դէմ բողոքը լսվում է մայրաքաղաքի ինքնավարական մարմնից, որը պէտք է, ընդհակառակը, լուսաւոր վերաբերմունքի օրինակ ցոյց տար դաւառի համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Շարունակում ենք մեր երէկվայ խօսքը: Ընդունում ենք, այո, որ Մխիթարեան հայրերը, վերջապէս, հասել են այն ուրախալի եզրակացութեան, թէ չէ կարելի դարերով կերակրել Մայրագոմեցիների, Յոհան Իմաստասէրների հարցով. ընդունում ենք, որ կեանքի լոգիկան վանական աւանդութիւններից զօրեղ հանդիսացաւ եւ հարկադրեց հասկանալ, որ դատարկ ու անպտուղ են աստուածաբանական իրթին ու վերացական վիճաբանութիւնները, հասկանալ, որ անապատի մէջ բարբառողի է նման այն մարդը, որ դարվինականութեան, չոգիի, նատուրալիզմի դարում շարունակում է քրքրել այն հարցը, թէ արդեօք Լեւոն պապը V դարում շատ լաւ էր հասկանում թէ ինչ կայ երկնքում: Այդ սթափումը, ժամանակակից ոգու այդ յաղթութիւնը մեզ ուրախացնում է. «Բազմավէպը» յիշատակում է կրօնական մոլեռանդութեան մի քանի փաստեր էլ: Խմբագրութիւնը ձեռնարկել է հրատարակելու մի համար պատկերազարդ «Բազմավէպ» յօգուտ հայ որբերի, բայց այդ ձեռնարկութիւնը անվստահութեան է հանդիպել Հայաստանեայց տիրացուների կողմից:

Կրօնական մոլեռանդութիւնը մասնաւոր նկատով մը ազգային վարժարաններէն հալածեց Մխիթարեանց գրքերը, վախնալով, որ թուարանութեան կամ քիմիայի եւ կամ բառագրոց մէջ կաթոլիկութեան վարդապետութիւններ գտնուին: Այս մի եւ նոյն մոլեռանդութենէն մղեալ՝ Պոլսոյ մէջ այլ եւ այլ կաթուղիկէ գրագէտք՝ օտար լեզուով կը հրատարակեն իրենց թերթերն: Կաթոլիկ խմբագիր մ'ալ լուսաւորչականի վերարկուով իր հայաթերթը կը խմբագրէ, զգուշանալով իր կրօնքն յայտնելու, զի անդէն լուսաւորչական բաժանորդաց մեծ մասն կը կորցնէ. վերջապէս կրօնական մոլեռանդութիւնը հայ կաթուղիկէ եւ բողոքական հասարակութեանց մէջ՝ ազատութիւն տուաւ օտարազգի դաստիարակաց մուտք գտնելու, եւ ներկայիս կաթուղիկեայց աշակերտք գաղղիացի, իսկ բողոքականաց՝ ամերիկացի եւ անգղիացի դաստիարակները կը կրթեն:

Այս բոլորը ոչ միայն կրօնական մոլեռանդութեան, այլ եւ կատարեալ վայրենութեան, զզուելի փարիսեցութեան նշաններ են: Եթէ այդ դրութիւնը շատ շահաւէտ է կաթոլիկ, լուսաւորչական եւ բողոքական եկեղեցիների տեսակէտից, բայց հօ չէ կարելի ուրանալ, որ դա մի եւ նոյն ժամանակ մի մեծ դժբաղդութիւն է ազգային տեսակէտից, մի տեսակէտ, որի համար Հոմը, Տաթեւացին կամ Լիւթերը չեն սիւներ, այլ լեզուն, կուլտուրական եւ մտաւոր համերաշխ կրթութիւնը: Բայց ինչ անենք, որ դոնէ այսուհետեւ այդպէս չը լինի: Հայի մոլեռանդ վայրենութիւնը անցեալից է ժառանգված. եւ չը կարծէք, թէ մենք նկատի ունենք միայն մեզանից շատ հեռու ժամանակները. ոչ, երէկ, անցեալ օրը, նոյն իսկ այսօր էլ հայը քրքրում է իր մարմնի վրա բուսած այն վէրքը, որի արմատը կրօնական երկպառակութիւնների կէսը—Սեւաստօպոլի ահեղ պատերազմը: Պատկերանում է այն մահվան երկունքը, որի մէջ կէս դար առաջ գտնվում էին այս դժբաղդ վայրերը: Ահա թիւրքաց, անգլիական, ֆրանսիական, իտալական զօրքերն ու նաւատորմները միացած ոյժերով գիշեր-ցերեկ կրակ են թափում այս չարատանջ վայրերի վրա: Սեւաստօպոլը 11 ամիս պաշարված՝ ոմբակոծվում է թշնամու կողմից: 11 ամիս կրակի բերան ընկած քաղաքը դիմադրում է հերոսական ոյժով: Բնակիչները՝ մեծ ու փոքր, կին ու տղամարդ, հարուստ ու աղքատ՝ զօրքի հետ միախառնված, օրինակելի անձնուրացութեամբ դէմ են գնում թշնամուն: Նրանք ողջ էութեամբ նուիրված են քաղաքի պաշտպանութեան. կանգնում են ամբարտակներ, քաղաքի շուրջը փորում են խրամատներ: Դառն է ճգնաժամը: Զօրքի հրամանատարներ, նաւատորմի իշխանաւորներ, նշանաւոր ծովապետներ հերոսական մահով ընկնում են իրար ետեւից՝ գնդակի հարուածներ ստանալով այն ժամին, երբ համարեա թշնամու աչքի առաջ զօրքի գլուխ անցած՝ զանազան կարգադրութիւններ են անում, յորդորում, խրախուսում են: Նրանք անձնական օրինակով, սեփական կեանքի զոհաբերութեամբ թեւ ու թիկունք են տալիս զօրքին... Վերջապէս, թշնամու առաջը կապելու համար, ձեռք է առնվում ծայրայեղ միջոց: Սեւաստօպոլի պաշտպանները կամաւ խորտակում են համարեա ամբողջ ռուսական նաւատորմը ծովախորշում եւ անցնելով ցամաք՝ սկսում ցամաքային դիմադրութիւն... Սակայն, վերջ ի վերջոյ դաշնակից մեծաթիւ թշնամին յաղթում է եւ տիրապետում այս բաղմատանջ վայրերը, ուր քար քարի վրա չը մնացած՝ ամեն ինչ արդէն հաւասարեցրած է լինում գետնի հետ: Սեւաստօպոլի պաշարման միջոցին, ինչպէս վկայում է ահեղ կռուի պատմագիրներից մէնը, սպանվում ու վիրաւորվում է 103,000-ի չափ մարդ ռուսներից, իսկ 54,000—դաշնակից թշնամիներից: Մօտաւորակի հաշուով երկու պատերազմող կողմեր արձակում են 2½ միլիոն թնդանօթային ռումբ, 45½ միլիոն հրացանի գնդակ եւ այրում 500,000 պուդ վառօդ:

Եւ այս բոլորը 11 ամսվայ ընթացքում:

Շատ անուրախ մտքեր ու զգացումներ է զարթեցնում մարդու մէջ այդ արիւնալի սոսկումների մտաբերումը... Պատերազմ... որպիսի դժոխային, տմարդի եւ հակաբարոյական գործ, որի կուլտը պաշտվում է դեռ մինչեւ այսօր եւ պաշտվելու է, ով գիտէ, դեռ մինչեւ երբ... Միայն մարդկային բարոյական տհասութիւնը եւ ընչաքաղցութեան բթացնող զգայմունքը ընդունակ են պաշտելի դարձնելու պատերազմի մարդասպան գաղափարը. միայն մարդու մէջ խորը բուն դրած գազանական հակումները կարող են արիւնահեղութեան գործը հանել հրճուանքի եւ նուիրականութեան պատուանդան... Իսկ դեռ որքան ժամանակ ու աշխատանք է պէտք, մինչեւ որ մարդս կը հասնի բարոյական կատարելութեան. որքան լոյս, լոյս է հարկաւոր, մինչեւ որ նրա մէջ կը մեռնի գազանը...

Այս տխրապատում յիշողութիւնների եւ դաւոն մտածումների տպաւորութեան տակ էի, երբ երկաթուղու գնացքը մեղմընթաց մօտեցաւ Սեւաստօպոլի կայարանին:

Ալ. Ծատուրեան

Եալտա.

ԲԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՐԻՄԻ ԱՓԵՐԻՑ

II

Բազմատանջ վայրեր

...Я спою, какъ, покинувъ и домъ и семью,
Шелъ въ дружину помѣщикъ богатый,
Какъ мужикъ, обнимая бабенку свою,
Выходилъ ополченцемъ изъ хаты...
Какъ подъ грохотъ гранатъ, какъ сквозь пламя и дымъ,
Подъ немолчные тяжкіе стоны,
Выходили редуты одинъ за другимъ,
Грозной тѣнью росли бастіоны,—
И одинадцать мѣсяцевъ длилась рѣзня...

Апухтинъ

Շատ հետաքրքրական է Սեւաստօպոլի ուղին իր դիրքով ու շրջապատով եւ թէ երկաթուղային այն ճարտարարուեստ շինութիւններով, որոնք հարկաւոր են եկել այդտեղից երկաթուղու գիծ անցկացնելու: Իւրաքանչիւր քայլափոխում երեւում է տեխնիկական գիտութիւնների ոյժն ու շնորհը: Բնութեան ամենամեծ խոչնդոտներ յաղթվել, խոնարհվել են ամենայաղթ գիտութեան առաջ: Տեղ-տեղ երկաթուղին անցնում է լեռնային արուեստական նեղ ճեղքվածներով, տեղ-տեղ—լեռների ժայռապատ ստորոտներով, տեղ-տեղ գնացքը դանդաղ սահում է մեծաշէն եւ ամրակառոյց կամուրջներով, տեղ-տեղ նա զարմանալի ոլոր-մոլոր պրոտոյներ գործելով՝ սլանում է առաջ: Իսկ չորս-հինգ անգամ ուղեւորներս բոլորովին կը տրվում ենք լոյս աշխարհից՝ ամբողջ վերստեր ճանապարհորդելով անթափանցիկ ու խոնաւ խաւարի միջով: Դրանք Սեւաստօպոլի յայտնի տօննելներն են, որոնք բացի երկիւղից՝ մի շատ անախորժ սառուցա ու սրտնեղութիւն են բերում մարդու վրա: Այդ գետնափոր ուղիների բորբոսնած կամարները, խոլ խաւարը, սառն ու խեղդուկ օդը, չը գիտենք ինչու, մի ակնթարթում իմ առաջ պատկերացնում են այն ստորերկրեայ անլոյս, մռայլ բանտերը, այն դժոխային պատժարանները, որոնց թէ անցեալում եւ թէ մեր օրերում հնարել է մարդը տանջելու իր նման մարդուն... Ո՛րպիսի ճիւաղային, գազանական գործ, որ յատուկ է միայն մարդ—գազանի հնարագիտութեան եւ վայրագ բնազդումներին...

Ահա, վերջապէս, Սեւաստօպոլի լայնածաւալ, նշանաւոր ծովախորշը: Նրա եզրերին վեր ու վայր փռված է ոչ պակաս նշանաւոր Սեւաստօպոլ քաղաքը իր շրջակայքով, որը ռուսաց պատերազմական կեանքի պատմութեան մէջ բռնում է այնքան արիւնալի էջեր: Եւ, իրաւ, որքան չանթալի ամպեր, որքան մահաշունչ փոթորիկներ են անցել այս բազմատանջ վայրերի գլխով... Տեսնել Սեւաստօպոլը եւ մտքով չը սուզվել նրա աղէտալի անցեալի մէջ—անկարելի է: Ամեն ինչ այստեղ խօսում է քո յիշողութեան հետ: Ամեն մի քար, ամեն մի բուն հող, ամեն մի անկիւն այստեղ յիշեցնում է մարդկային առատահեղ արիւն, անողոք կոտորած, կրակ ու գնդակ, թրի ու սրի աւերածութիւն: Եւ այդ բոլորը, յիրաւի, կապված զարմանալի հերոսութեան եւ զոհաբերութեան հետ: Աչքիդ առաջ պատկերանում է յիսնական թուականների կէսը—Սեւաստօպոլի ահեղ պատերազմը: Պատկերանում է այն մահվան երկունքը, որի մէջ կէս դար առաջ գտնվում էին այս դժբաղդ վայրերը: Ահա թիւրքաց, անգլիական, ֆրանսիական, իտալական զօրքերն ու նաւատորմները միացած ոյժերով գիշեր-ցերեկ կրակ են թափում այս չարատանջ վայրերի վրա: Սեւաստօպոլը 11 ամիս պաշարված՝ ոմբակոծվում է թշնամու կողմից: 11 ամիս կրակի բերան ընկած քաղաքը դիմադրում է հերոսական ոյժով: Բնակիչները՝ մեծ ու փոքր, կին ու տղամարդ, հարուստ ու աղքատ՝ զօրքի հետ միախառնված, օրինակելի անձնուրացութեամբ դէմ են գնում թշնամուն: Նրանք ողջ էութեամբ նուիրված են քաղաքի պաշտպանութեան. կանգնում են ամբարտակներ, քաղաքի շուրջը փորում են խրամատներ: Դառն է ճգնաժամը: Զօրքի հրամանատարներ, նաւատորմի իշխանաւորներ, նշանաւոր ծովապետներ հերոսական մահով ընկնում են իրար ետեւից՝ գնդակի հարուածներ ստանալով այն ժամին, երբ համարեա թշնամու աչքի առաջ զօրքի գլուխ անցած՝ զանազան կարգադրութիւններ են անում, յորդորում, խրախուսում են: Նրանք անձնական օրինակով, սեփական կեանքի զոհաբերութեամբ թեւ ու թիկունք են տալիս զօրքին... Վերջապէս, թշնամու առաջը կապելու համար, ձեռք է առնվում ծայրայեղ միջոց: Սեւաստօպոլի պաշտպանները կամաւ խորտակում են համարեա ամբողջ ռուսական նաւատորմը ծովախորշում եւ անցնելով ցամաք՝ սկսում ցամաքային դիմադրութիւն... Սակայն, վերջ ի վերջոյ դաշնակից մեծաթիւ թշնամին յաղթում է եւ տիրապետում այս բաղմատանջ վայրերը, ուր քար քարի վրա չը մնացած՝ ամեն ինչ արդէն հաւասարեցրած է լինում գետնի հետ: Սեւաստօպոլի պաշարման միջոցին, ինչպէս վկայում է ահեղ կռուի պատմագիրներից մէնը, սպանվում ու վիրաւորվում է 103,000-ի չափ մարդ ռուսներից, իսկ 54,000—դաշնակից թշնամիներից: Մօտաւորակի հաշուով երկու պատերազմող կողմեր արձակում են 2½ միլիոն թնդանօթային ռումբ, 45½ միլիոն հրացանի գնդակ եւ այրում 500,000 պուդ վառօդ:

Եւ այս բոլորը 11 ամսվայ ընթացքում:

Շատ անուրախ մտքեր ու զգացումներ է զարթեցնում մարդու մէջ այդ արիւնալի սոսկումների մտաբերումը... Պատերազմ... որպիսի դժոխային, տմարդի եւ հակաբարոյական գործ, որի կուլտը պաշտվում է դեռ մինչեւ այսօր եւ պաշտվելու է, ով գիտէ, դեռ մինչեւ երբ... Միայն մարդկային բարոյական տհասութիւնը եւ ընչաքաղցութեան բթացնող զգայմունքը ընդունակ են պաշտելի դարձնելու պատերազմի մարդասպան գաղափարը. միայն մարդու մէջ խորը բուն դրած գազանական հակումները կարող են արիւնահեղութեան գործը հանել հրճուանքի եւ նուիրականութեան պատուանդան... Իսկ դեռ որքան ժամանակ ու աշխատանք է պէտք, մինչեւ որ մարդս կը հասնի բարոյական կատարելութեան. որքան լոյս, լոյս է հարկաւոր, մինչեւ որ նրա մէջ կը մեռնի գազանը...

Այս տխրապատում յիշողութիւնների եւ դաւոն մտածումների տպաւորութեան տակ էի, երբ երկաթուղու գնացքը մեղմընթաց մօտեցաւ Սեւաստօպոլի կայարանին:

Ալ. Ծատուրեան

Եալտա.

բենց մայրենի լեզուէն միշտ անբաժան մնալ, բայց ատոր համար կարեւոր է ազգային վարժարաններ եւ հայ մասուլ մը, զոր գաղթական հայուն նիւթական վիճակը կարող չէ ձեռք բերելու։ Ամերիկայի եւ Ռուսաստանի միլիոնատէր հարուստներն պէտք են ձեռք տալ հայրենիքէն տարամերժեալ այդ ազգային մեծ գաղութին, կարեկցութիւն ու գութ պէտք է։

Միանգամայն ճիշդ նկատված գրութիւն։ Տեսնում էք, ուրեմն, կան հարցեր, որոնք հաւասարապէս թանգ ու գնահատելի են կրօնական զանազան գոյներ ունեցող հայերի համար։ Խօսեցէք այդպէս, եւ դուք կը տեսնէք որ սառնութիւնը, փոխադարձ ատելութիւնը կը թուլանան, կը վերանան։ Եւ այդ խի գործ կատարելու համար պէտք է մոռանալ շատ բան. պէտք է թողնել վանական խուցի իմաստութիւնը, որոնել աշխարհիկ իդէալներ, կեանքի խրատներ եւ որ ամենագլխաւորն է, պէտք է լինել անկողմնապահ, պատրաստ վատին վատ, լաւին լաւ ասելու։ Այդ տեսակէտից մեզ համար անհասկանալի են «Բազմավէպի» հետեւեալ խօսքերը.

Գաղթականներու մեծ մասը բողոքական հովիւներու հովանաւորութեան ներքեւ կը գտնուին. 50,000 հայ որբերէն մեծ մասը կը խնամուին գերմանացի, ամերիկացի եւ անգլիացի խնամակալներու ձեռքով. լուսաւորչականներէն փոքր մաս մի առ ժամանակեայ կաթուղիկեայ դաւանանքը կընդունի, եւ ահա, վայնասունը ամէն կողմէն կը զօրանայ. իսկ անդին մեծ մասը բողոքականութեան՝ հայ կրօնքէն բոլորովին տարբեր դաւանանքի մը կը յարի, ոչ ոք կականներ կը բարձրացնէ, ոչ ոք կը խռովի!

Կաթոլիկ դաւանանքը ընդունելու առիթով մենք ենք եղել, որ ապագրել ենք մի շարք կծու, յարձակողական յօդուածներ։ Եթէ «Բազմավէպը» մեզանից է այդպէս վշտացած, խորհուրդ կը տանք նորից կարդալ այդ յօդուածները։ Մենք, այո, իբրեւ մարդ, իբրեւ մարդկային արժանապատուութիւնը յարգող անհատ, խորապէս վրդովվեցանք այն ստոր ու անազնիւ վաճառքից, որ բացվել էր Վանում՝ հ. Շարմրտանի հովանաւորութեան ներքոյ։ Թող մեզ ցոյց տան թէ արդար չէր մեր վրդովմունքը, թող ապացուցանեն, որ կարելի էր այլապէս վերաբերվել մի տխուր, անպատիւ երեւոյթին։ «Բազմավէպը» կամենում է թուլացնել Ճնտոյեանների արարքները, ասելով թէ «կաթուղիկէ քահանային դաւանանքը ամենափոքր տարբերութիւն մը միայն ունի լուսաւորչականէն». կարծես թէ մենք դաւանանքը եւ նրա տարբերութիւնն ունէինք ի նկատի։ Ոչ, վատութիւնը չէ կարելի արդարացնել այդպիսի սոփեստութիւններով։ Շատերը ասում են, որ Անգլիան դատապարտելի չէ ներկայ բօէրական պատերազմում, քանի որ նա իր նուաճած երկիրներին ինքնավարութիւն է տալիս։ Բայց դա անհեթեթ դատողութիւն է. դա նշանակում է արդարացնել բռնութիւնը, օրբաղդել ուժեղի իրաւունքը, ձիւնափայլ մաքրութիւն հաղորդել բօրսայական գաղանների արիւնռուշտ հակումներին։ Վատութիւնը չէ դադարում վատ լինելուց, եթէ նա գործադրվում է Անգլիայի պէս մի կուլտուրական, կրթված երկրի ձեռքով, ինչպէս նաեւ վատը վատ է մնում, թէկուզ նրան գործադրող կաթոլիկ կղերականը դաւանանքով շատ հեռու չէ կամ բոլորովին հեռու չէ հայ կղերի դաւանանքից։ Այս տեսակ սկզբունքների լայն գործադրութիւն ենք ցանկանում եւ «Բազմավէպին»։ Իսկ նրա ներկայ յօդուածի առիթով կասենք. A la bonne heure! Շարունակեցէք այդպէս, եւ մեր հաւակրութիւնը կունենաք ձեր կողմը։

ՆԱՄԱԿ ԾԱՂԿԱՁՈՐԻՑ

—

Մայիսի 26-ին

Ծաղկաձորի շրջանում արդէն ցանքը վերջացաւ. հողագործներից շատերը այս տարի կիսատ ցանք ունեցան՝ սերմացու չունենալու պատճառով։ Ահագին տարածութեամբ վարելահողեր են մնացել պարապ, անցանք։ Բոլոր գիւղացիները դժգոհ են իրանց վիճակից, բացի մի քանի հարուստ վաշխառուներից եւ համփաներից, որոնք աւելի առատ հունձ ունեն այսպիսի թանգ տարիներում, որովհետեւ ինչ գնով եւ ինչ պայմանով ուզեն՝ կը տան իրանց ապրանքը կամ փողը։ Ցուէք սոված գիւղացուն քանի ուզում էք կամ ինչ չափով չափում էք,—նա լուռ է ձեր առաջ, որովհետեւ նա քաղցած է, հաց է ուզում ուտել. եւ այդ կարիքը Նրան թելադրում է հնազանդվել, համաձայնվել ամեն մի պայմանի, նոյն իսկ ծանր, անտանելի պայմանի... թէ ուտելու եւ թէ ցանելու սերմի կարիքը չատերին ստիպում է վիզ թեքել ում առաջ ուզում է լինի։

Կարիքը չատ զգալի է շրջակայ մի քանի գիւղերի համար, նաեւ մեր Ներքին-Ախտայի համար, որը նոյնպէս աղատ չէ չքաւորութիւնից։ Այդպիսի գիւղերի ժողովուրդը մէկը միւսի յետեւից խնդրամատոյց է լինում կառավարութեան՝ օգնութիւն խնդրելով։ Եւ իրաւ, եթէ դրսից օգնութիւն չը հասնի, Աղաղկաձորի չատ գիւղերի բնակիչները կորած են։ Անցեալ տարվայ երաշտութիւնից չատ անասունների ջարդը նոյնպէս մեծ հարուած հասցրեց նրանց։ Թէեւ կոտորվող անասունների գինը կանոնաւոր կերպով վճարվեց անատատիրոջը, բայց այդ փողը գիւղացու գրպանում չը մնաց։ 30—40 ռուբլիով սոված գիւղացին անկարող է վերակազմել իր քայքայված տնտեսութիւնը, եւ այդ փողը, ինչպէս ասում են՝ «ձեռի կեղտի» պէս գնաց. ուրեմն դուք եւ այն, որ գիւղացին հաշուի մարդ չէ, որ նա նոյն իսկ 100 ռուբլիով չէ կարող եօլա գնալ, որովհետեւ եթէ այդ գումարով նա մի եզ եւ մի կով գնելու լինի, չուտ կամ դուտան չի ունենայ, կամ թէ երբ դրանց ձեռք բերի այդ գումարով,—այն ժամանակ սերմը կը պակասի, հետեւապէս գիւղացին այդպիսի գումարներով անկարող է լցնել այն պակասը, որ տարիներ առաջ տուժել է։

Նրան հարկաւոր է հողի արդիւնքը, որը այս տարի մեծ յոյս է ներշնչում, որովհետեւ ամպոտ երկինքը ամեն օր անձրեւ է կաթեցնում նրա ցանքերի վրա... Դորշ եւ թխպոտ ամպերով ծածկած երկինքը այն աստիճան է ուրախացնում գիւղացուն՝ որ անկարելի է ասել, իսկ պարզ եւ կապուտակ երկինքը Նրան վախեցնում է ամեն բոպէ, որովհետեւ այդ կապուտակ երկինքը երաշտ է բերում չորացնում Նրա բոյսը, Նրա միակ միխիթարութիւնը։ Բայց յաճախ այդ ամպոտ երկինքը դժբաղդութիւն է բերում գիւղացու գլխին. մի քանի տեղ արդէն կարկուտ է տեղացել, բայց քիչ քանակութեամբ եւ մանր։ Եթէ այս տարի էլ մի որ եւ է բնական աղէտ պատահի, հաստատվում ենք, բոլորը կորած են, սովի ծայրայեղ աստիճանին մատնվելով...

Ռ. Տ. Գէորգեան

ՆԱՄԱԿ ԿՕՋՕՐԻՑ

—

Մայիսի 28-ին

Կօջօր ամառանոցը վերսկսում է իր կեանքը։ Ութ ամիս խորին լռութեան մատնված փողոցները, տները, հիւրանոցները, խանութները եւ, վերջապէս, հասարակութեանը զուարճութիւն պատճառող բոլոր կերպարանափոխ են եղել։ Ամեն տեղ թխթխկոց, կարկատանք, նորոգութիւն կամ նոր շինութիւն տենդային արագութեամբ առաջ են գնում. ամեն մէկը աշխատում է օր առաջ իր տունը—ամարանոցը նորոգել, յարմարեցնել եւ զարդարել, որ աւելի թանգ գնով վարձով տայ։ Տեղական ինքնավարութիւնն էլ յետ չէ մնացել. նա էլ սկսել է ձիւնից եւ անձրեւներից վնասված փողոցները, սալայատակները նորոգել, լապտերները կարգի դնել եւ ծառուղիները ու ճեմելիքները հարթել ու խաղ։ Ոսոիկանական մարմինը, պօստ-հեռագրական վարչութիւնը, հիւրանոցները, կենսական մթերքների վաճառանոցները արդէն սպասում են «սար գնացողներին»։ Թէեւ այս տարվայ անձրեւային եղանակների պատճառով դեռ չատ տներ դատարկ են, բայց եւ այնպէս ամարանոցների գները չեն իջնում։

Միայն մի հաստատութիւն իր կից կալուածքներով գտնվում է անմխիթար դրութեան մէջ, որ անցնողի վրա աւերակի տպաւորութիւն է թողնում։ Սրտի ցաւով պէտք է ասել, որ դա հայոց եկեղեցին է իր կալուածքներով, որ վերջին տարիների ընթացքում, հնորհիւ անհոգ երէցփոխների եւ հերթով գնացող քահանաների, հասել է այդ դրութեան։ Մենք գիտենք երէցփոխներ, որոնք երկար ժամանակ հաշիւ չը տալով դարձեալ ընտրվել են եւ հաստատվել հոգեւոր իշխանութիւնից։ Մի եկեղեցի անչուք ներսից եւ դրսից, պարիսպը կիսաւեր, գաւիթը, պատերը, դռները քարուքանդ եղած, մէջը անասուններ արածելիս, իսկ նրան կից կալուածքները խարխուլ, անշուք դրութեան մէջ, ջրով լիքը տանիքի կաթոց—ահա այդ եկեղեցու եւ նրա կալուածքների տխուր պատկերը։

Չեմ կարող չասել մի եւ նոյն ժամանակ, որ նոր երէցփոխ պ. Ն. Նարիմանեան առանձին ուշադրութեամբ ձեռք է զարկել այդ եկեղեցին իր կալուածքներով վերանորոգել եւ վերածել նախկին օրինակելի դրութեան։ Նա եկեղեցու արդիւնքները զատել է քահանայական արդիւնքներից։ Կալուածքների եկամուտները որոշել է գործադրել համաձայն եկեղեցի կառուցանող Ալէքսանդր Թայիրեանի կտակի, այն է երգեցիկ խմբի պահպանութեան համար։ Այդ խմբի օգտին հանգանակվող կամաւոր նուէրներ ժողովելը եկեղեցական մատեանով իր վրա է առել, թողնելով հերթով կօջօր գնացող քահանաներին իրանց իրաւունքների եւ պարտականութիւնների սահմանում։ Ցուսով ենք, որ Կօջօրի հարուստ կալուածատէր եւ եկեղեցի հայ ժողովուրդը կաջակցի նորընտիր երէցփոխին այս գովելի գործում։

Կօջօրցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Եկատերինօդար, մայիսի 10-ին

Անցեալ տարի մի յօդուածով «Մշակի» ընթերցողների ուշադրութիւնն էի հրաւիրել Օդեսայում բացվող էլեքտրօտեխնիկական դպրոցի վրա եւ յորդորել էի ուսումնածարաւ, հավասարանազուրկ պատանիներին օգտվել այդ նպատակայարմար եւ իր տեսակի մէջ Ռուսաստանում առաջին դպրոցից։ Այդ բոլորը գրել էի, ի հարկէ, յենվելով ծրագրի վրա, որը եւ նամակիս հետ ուղարկել էի խմբագրութեանդ։

Դժբաղդաբար, այդ իմ նամակը առանց հետեւանքի չանցաւ. տասից աւելի աշակերտներ զանազան կողմերից չտապցին Օդեսա, անձամբ կարդացին ծրագիրը (չատերը դիմել էին ինձ նամակով առաջ քան գալը եւ խընդրել ծրագիրը, որը եւ ուղարկել էի) եւ ամենքը, դժբաղդաբար, ընդունվեցին դպրոց։ Դժբաղդաբար եմ ասում, որովհետեւ այժմ պարզ է, որ այդ ծրագիրը եղել է լոկ իբրեւ բեկլամ, անբարեխիղճ բեկլամ, իսկ ամբողջ ձեռնարկութիւնը՝ մի կատարեալ աֆեօրա եւ գեշեֆտ։

Այժմ արդէն վիժված այդ դպրոցը իր առաջխոստում ծրագրի միայն մի կէսն է, որ իսկութեամբ կատարել է. այդ՝ 150 ռուբլի իւրաքանչիւրից (եթէ ուրիշ մանր ծախսերն էլ հաշուելու լինենք գործիքների եւ այլ պիտոյքների համար վճարված—200 ր.), ուսման վարձ գցելն է, որ չէ մոռացել «ծրագրի համաձայն» կատարել։ Մնացածը՝ ձեռնհաս ուսուցիչներ վարձելը, դպրոցին դպրոցի կերպարանք տալը, խոստացած առարկաների կանոնաւոր ուսանելը եղել են երկրորդական, երրորդական բան կամ, ամենալաւ դէպքում՝ բարի նպատակներ, որոնցով, ինչպէս յայտնի է, դժոխքն է սալայատակված։

Ես դուրս եկայ Օդեսայից, երբ նոր էր դպրոցը բացվել։ Դեռ այն ժամանակ էլ այս ու այն աշակերտից լսելի էին տրտունջներ, որ բայատրում էի գործի նոր լինելովը։ Տարվայ կէսից տրտունջները սաստկացել են եւ վերջապէս ընդհանուր կերպարանք են ստացել թէ հայ եւ թէ օտարազգի աշակերտների կողմից։ Մեծ մասը դուրս է եկել դպրոցից։ Մի քանիսը դատարանի են դիմել եւ դատարանի միջոցով յետ են պահանջել իրանց վճարած ուսման վարձը։ Միջամտել է գործին նոյն իսկ քաղաքագլուխը եւ արգելել է տեսչին աւանդել եւ այն ողորմելի կցկտուր տեղեկութիւնները՝ գիտութեան զանազան ճիւղերից, որոնք պիտի փոխարինէին ծրագրում առատապէս խոստացած առարկաներին։ Այժմ դպրոցը, իբրեւ դպրոց, փակված է։ Մնացել է նա միայն իբրեւ հասարակ արհեստանոց։

Բանից դուրս է գալիս, որ պ. Սօկոլովսկին հրատարակել է իր ծրագիրը նոյն իսկ դեռ կանոնաւոր թոյլտուութիւն չը ստացած։ Վերջապէս, մի կատարեալ աֆեօրա, Օդեսայի գեշեֆտների մի նմուշը։ Բայց գեշեֆտ առեւտրի մէջ, գեշեֆտ մակլերների եւ բանկերի մէջ, այլ եւ գեշեֆտ դպրոցական սուրբ գործում... Օ՜, սա արդէն նոր է, նոր է նոյն իսկ գեշեֆտմախերների այդ յայտնի վայրում, Օդեսայում, ուր ճարպիկ-խարեբաներն են օրվայ հերոսները։ Բայց ով կարող էր կարծել, թէ այդքան հեռու պիտի գնան ճարպիկների թաթերը, որ նրանք պիտի խոթեն իրանց ճանկերը նոյն իսկ դպրոցական սուրբ գործում...

Այսպէս թէ այնպէս, իրողութիւնը կատարվել է, 10-ից աւելի հայ աշակերտներ այսօր տուժել են եւ նիւթականապէս եւ բարոյապէս... իմ դիւրահաւատ լինելու պատճառով։

Պարտք եմ զգում սրանով հրապարակով ներողութիւն խնդրել այդ անմեղ պատանիներից, որ ակամայից պատճառ եմ եղել իրանց այս անաջողութեանը եւ փոխանակ բարիքի, որ եղել է ցանկութիւնս, չարիք եմ հասցրել իրանց իմ նամակովս։ Այս նամակս մի եւ նոյն ժամանակ թող լինի իբրեւ զգուշութիւն այն պատանիների համար, որոնք թերեւս մտածում են նոյն դպրոցի մասին։

Մ. Մարգարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը, քննելով կովկասեան ցուցահանդէս կազմելու խնդիրը, եկաւ այն եզրակացութեան, որ պէտք է յետաձգել այդ ցուցահանդէսը աւելի յարմար ժամանակի։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ շուտով ֆինանսների մինիստրութեան մէջ կը քննվի մանուֆակտուրային ապրանքը Մոսկվայի եւ Վարշավայի շրջաններից Անդրկովկաս եւ Միջին Ասիա փոխադրելու տարիֆներին վերաբերեալ չատ նշանաւոր հարցը։

—

Այս տարի Թիֆլիսի շրջակայքը աղքատ է մրգերով։ Սաստիկ քամիներից, որոնց մասին հաղորդել էինք «Մշակի» մէջ, ծառերի ծաղիկները եւ նորակազմ պտուղները փչացան եւ այգիները զրկվեցին մրգերից։ Վնասվել են Դիդուբէի, Սօղանլուխի, Կրծանիսի, Օրթաճալի եւ շրջակայ ուրիշ տեղերի այգիները։

—

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան մէջ ներկայումս քննվում է վերադիր վճարներին վերաբերեալ կանոնների մի չատ էական նախագիծ։ Ի նկատի ունենալով, որ այդ կանոնները մեծ նշանակութիւն ունեն առեւտրի համար, մինիստրութիւնը վճռեց նրանց օրէնսդրական ճանապարհով անցկացնել, այսինքն ներկայացնել պետական խորհրդի քննութեանը։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Վերջին օրերս զգալի քայլերով առաջ է գնում քաղաքի էլէկտրական լուսով լուսաւորելու գործը։ Արդէն անկվել են էլէքտրական լապտերների գեղեցիկ ձուլածոյ սիւները. ասում են, չուտով կը վերջանան աշխատանքները։ Ծովեզերքում վաղուց անկված են սիւները. չուտով կը կախվեն ճերմակ կլոր լապտերները։ Իրաւ, դիւթական տեսարան կը ներկայացնէ առանց այդ էլ գեղեցիկ Բաթումը էլէքտրական լոյսի տակ»։

—

ԱԶԱ գիւղից (Հին-Նախիջեւանի գաւառ) մեզ գրում են. «Մայիսի 20-ին, գիշերը ժամը 10-ին, մի ոմն Առաքել Պողոսեանց իր որդու հետ մտնում է մի գիւղացու այգուց թթենի տերեւ գողանալու, բժժի սերմի համար. մի ուրիշ երիտասարդ, այդ միջոցին անցնելիս պարտէզի մօտից, լսում է ծառերի կտրատելու ձայնը, իսկոյն վազում է եւ յայտնում գիւղացիներին։ Գիւղացիներից 6 հոգի գալիս են եւ պարտէզում հանդիպում տերեւ գողացողներին. երկու հակառակորդների մէջ կռիւ է սկսվում։ Առաքել Պողոսեան սարճանակի հարուածով տեղնուտեղը սպանվում է, իսկ նրա որդին սրի մի քանի հարուածներ ստանալով փախչում է։»

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Քաղաքը ձեռնարկել է մի քանի խոշոր շինութիւններ կառուցանելու։ Բաւական առաջ է գնացել արաբական գիմնազիայի շէնքը, որ բռնում է ծովի ափին մի չատ ընդարձակ տեղ։ Ծածկելուն մօտեցած է քաղաքային գպրոցի մեծ եւ յարմարաւոր շինութիւնը։ Սկված է քաղաքային ասն (դուստրի եւ ուպրավայի) սեփական շինութիւնը։ Արդէն բոլորովին աւարտվելուն մօտ է քաղաքային հիւանդանոցի շինութիւնը։ Վերջանալու վրա են ռուսաց փառաշէն տաճարը (մնացել է ներսի կարգաւորութիւնը), հայ լուսաւորչականների փոքրիկ, բայց չատ սիրունիկ եկեղեցին, լատինների բարձրաձիգ աղօթատունը։ Հիմքը ձգած մնացած է վրաց եկեղեցին. պատրաստութիւններ են տեսնում յարմարաւոր սինագոգա շինելու հրէաները։ Ծածկվելուն մօտենում է Թիֆլիսի առեւտրական բանկի տեղիս բաժանմունքի սեփական շինութիւնը, որ ամբողջովին կառուցված է սրբատաշ սպիտակ քարից»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

Թիւրքաց «Մեշվերէթ» լրագիրը հետեւեալ կերպով է նկարագրում Թիւրքիայի ներկայ դրութիւնը։

«Երջանիկ է ամբոխը։ Ապրելով իր առօրեայ հոգսերի մէջ, նա ոչ ժամանակ եւ ոչ հնարաւորութիւն ունի քննել իրերի ընդհանուր դրութիւնը եւ համակվիլ ընդհանուր վշտով եւ ուրախութեամբ։

«Թիւրքիան այժմ կարծես մի սառցային լեռ է ներկայացնում, որ լողում է ովկիանոսի անհուն տարածութեան մէջ։ Այդ անհատատ մասան դեռ եւս կանգուն է։ Բայց ֆիզիքական օրէնքը անողորմ է, եւ նա կամայ-կամայ հալվելով եւ ցիր ու ցան լինելով, պէտք է խորտակվի եւ անհետանայ զօրեղ տարերքի մէջ։ Ոչ թէ մռայլ յոռետեսութիւնն է նկարում մեր աչքի առջեւ այս պատկերը, այլ դառն իրականութիւնը։

«Երկու դար առաջ մեր յաղթական առաջնորդները զատեցին մի մեծ կայսրութեան սահմանները։ Նրանց սերունդները, ինչպէս ասում է մի հանգուցեալ գրագէտ, ոչ միայն ժառանգեցին հայրերի հանճարը, այլ եւ նրանց ոգին։ Նրանք ամենուրեք տարածեցին իրենց ոգին։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր կենդանութիւն։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր կեանք։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր ազգեր։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր պետութիւններ։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր քաղաքակրթութիւն։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր գրականութիւն։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր գեղեցկութիւն։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր ազատութիւն։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր ...

«Ինչպէս ասում է մի հանգուցեալ գրագէտ, ոչ միայն ժառանգեցին հայրերի հանճարը, այլ եւ նրանց ոգին։ Նրանք ամենուրեք տարածեցին իրենց ոգին։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր կենդանութիւն։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր կեանք։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր ազգեր։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր պետութիւններ։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր քաղաքակրթութիւն։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր գրականութիւն։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր գեղեցկութիւն։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր ազատութիւն։ Նրանք ամենուրեք ստեղծեցին նոր ...

թացութիւնը կանգնեցրեց հիւսիսային հսկան, եւ այն ժամանակից մենք, կամայ ակամայ, սկսեցինք զսպել մեր ձգտումները եւ խաղաղ յարաբերութիւն հաստատել Արեւմուտքի քաղաքակիրթ ժողովուրդների հետ։ Երկու հարիւր տարվայ ընթացքում մօսկովների փոքրիկ թագաւորութիւնը աճեց եւ դարձաւ մի ընդարձակ կայսրութիւն։ Այդ կայսրութիւնը հսկայական քայլերով հասաւ Եւրոպայի կուլտուրային։ Այժմ նա իր զօրութեամբ տոն է տալիս երկրագնդի երկու մասերին։

«Ինչով բացատրել Ռուսաստանի այդպիսի աճողութիւնը եւ միւս կողմից օսմանեան կայսրութեան սիստեմաբար քայքայումը։ Արդեօք քրիստոնէական եւ մահմեդական կրօնների տարբերութեամբ։ Արդեօք այդ երկու ժողովուրդների ցեղական յատկութիւններով։

«Ոչ մէկը եւ ոչ միւսը. մահմեդական կրօնը չարգելից արաբներին բարձր կուլտուրա ստեղծել։ Թէպէտ եւ մենք մօնդօլական ցեղ ենք համարվում, բայց արիական արիւնը մեր մէջ աւելի պակաս չէ, քան ռուսների մօտ։ Ուրեմն ինչն է մեր անկման պատճառը եւ Ռուսաստանի աճման պատճառը։

«Մեր խորին համոզմունքով մեր անկման պատճառը ինքնուրոյն ազգային քաղաքականութեան բացակայութիւնն է, մեր մեծութեան մասին սխալ հասկացողութիւնը եւ մեր սեփական շահերի չը հասկանալը։

«Այն ժամանակից, որ մենք ընդհարում ունեցանք ռուսաց զօրութեան ստեղծագործողի՝ Պետրոս Մեծի հետ, մենք յամառութեամբ դիմում էինք մէկ նպատակի՝ վրէժ առնել Ռուսաստանից մեր պարտութիւնների համար։ Ցաւիչակված այդ մտքով, մենք արեւմտեան բարեկամների կոյր գործիք էինք դառնում, որոնք ճարպիկութեամբ օգտվում էին մեր idée fixe-ից։ Եւ ով չէ օգտվել մեզանից։ Այն ինչ Ռուսաստանը շարունակ աճում եւ աճում էր, իսկ մենք շարունակ փոքրանում էինք մեր ծաւալով։ Պատերազմական փաւքի նեսելից ընկնելով, մենք մոռացանք այն, որ մեր գոյութեան հիմքը, մեր կենսունակութեան գրաւականը պէտք է լինի եւրոպական կուլտուրայի ընդունելը իր ամբողջ ծաւալով։ Նրա փոխարէն մենք ընդունում ենք եւ շարունակում ենք ընդունել Եւրոպայի տեխնիական կատարելագործութիւնները միայն պատերազմական մթերք պարտաւելու վերաբերմամբ։ Մեր պետութեան երկդարեայ կորստաբեր քաղաքականութիւնը, մեր պետական մարդկանց կուրութիւնը աւելի մեծ ոյժով սկսեց երեւան գալ վերջին տասնամեակում, երբ Գերմանիան սկսեց օգուտ քաղել դէպի Ռուսաստանը մեր ունեցած գաղտնի թշնամութիւնից։ Սիրով քաջալերելով մեր բոլոր թուլութիւնները, փակելով աչքերը մեր ներքին անկարգութիւնների վրա, մինչեւ անգամ խրախուսելով մեզ մեր խոշոր մոլորութիւնների եւ դէպի մեր հպատակ ժողովուրդների հետ սպարդի յարաբերութիւնների մէջ, Գերմանիան մեզ հետ վարվում է, որպէս հնազանդ վասալի հետ, որի զօրքերը նա պատերազմական առաջնակարգ դիրքի վրա կը դնէ, երբ ժամանակը կը հասնի»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Köln. Zeitung» լրագրի Աթէնքի թղթակիցը հաղորդում է, որ Թիւրքայ իշխանութիւնները բռնեցին յունական «Մարիա» շոգենաւը Դարդանէլում, մի նաւ, որ շրջաններ էր կատարում Սեւ ծովի բուլգարական ափերի եւ Փոքր-Ասիայի միջեւ։ Կ. Պոլսում այդ նաւը նստեցին երիտասարդ Թիւրքերի կուսակցութեան պատկանող քսան եւ հինգ անդամներ, որոնք բոլորն էլ Թիւրքայ վարչութեան մէջ բաւական նշանաւոր պաշտօններ էին վարում, բայց գերադասեցին հեռանալ Թիւրքիայից, հիմք ունենալով վախենալու իրանց ապագայից։ Դարդանէլում նաւը բռնվեց, փախստականները եւ նաւի վրա ծառայողները կալանաւորվեցին։ Ցունայ դեսպանը պահանջեց արձակել կապիտանին, որը յունայ հպատակ եւ բռնված նաւի տէրն է։ Դեսպանի առաջադրութիւններն առ այժմ առանց հետեւանքի են մնում, բայց Թիւրքայ արտաքին գործերի մինիստրը այդ առիթով պահանջեց, որ յունական կառավարութիւնը աքսորէ Ցունաստանում, մանաւանդ Աթէնքում ապրող երիտասարդ Թիւրքերին, որոնց թւում գտնվում է Քեամիլ-բէյ, որը մեծ յարգանք է վայելում յունայ մայրաքաղաքում։ Ցունաստանը մի անգամ արդէն մերժողական պատասխան տուեց այդ պահանջին, յայտնելով, որ Ցունաստանի թագաւորութեան սահմանադրութեամբ այդ անհնարին է անել, քանի որ փախստականները իրանց հանգիստ են պահում։

—Զինական մի մանդարին, որ այժմ գտնվում է Պարիզի ցուցահանդէսում, Պարիզի ժուրնալիստներից մէկին հետեւեալ բացատրութիւնները տուեց «Մեծ բռունցքի» աղանդի մասին. «Մեծ բռունցքի» շարժումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ գիւղացիների ապստամբութիւն, որովհետեւ զէնքեր չունենալով, նրանք կռւում են բռունցքներով։ Պէկին-Լիւգան երկաթուղիական գիծը, որ շահագործում է Ֆրանս-բէլգիական ընկերութիւնը, անցնում է այն տեղով, ուր ապրում են այդ գիւղացիները։ Զինացիները սովորութիւն ունեն իրանց գերեզմանոցները չինել լեռների վրա, որոնց գագաթների վրա նրանք կառուցանում են տաճար, իսկ նրանց ստորոտում գետեղված են լինում դամբարաններ։ Այդ լեռները սրբազան են, եւ տաճարներն անձեռնմխելի սրբութիւններ են համարվում։ Երկաթուղիական ճանապարհ անցկացնելով, ֆրանս-բէլգիական ընկերութիւնը քանդում էր գերեզմանոցները, աւերում էր տաճարները, եւ դժուարացնում էր ճանապարհը դէպի այդ սրբազան տեղերը։ Այդ բոլորը գրգռեց ժողովրդի կատաղութիւնը եւրոպայիների դէմ։ «Մեծ բռունցքի» անդամները չեն ցանկանում, որ իրանց ձեռքից խլեն իրանց հողաբաժինները։ Նրանց ապստամբութիւնը մի տեսակ գիւղացիների գործադուլ է, որոնք բողոքում են իրանց սեփականութիւնը խլելու եւ հաւատալիքները վիրաւորելու դէմ»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

30 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայիսի 29-ին Թագաւոր Կայսրը, Թագաժառանգը եւ Մեծ Իշխաններ Վլադիմիր Ալէքսանդրովիչ, Պավել Ալէքսանդրովիչ եւ Կոնստանտին Կոնստանտինովիչ այցելեցին բեւեռային երկիրները ուղեւորվող «Заря» շոգենաւը։

ԿԻԵՎ։ Անձրեւների բացակայութիւնը հարաւ-արեւմտեան երկրում ապագայ բերքի համար երկիւղներ է ներշնչում. հողը չորացաւ, դաշտերը դեղնեցին, խոտն այրվեց. զօրեղ քամին չորացնում է ամեն ինչ։ Գիւղատնտեսները յուսահատված են։ Շատ այգիներում նախատեսվում է պտուղների կատարեալ անբերրիութիւն։ Այսօր Կիեւում տեղատարափ անձրեւ եկաւ կարկուտի հետ միասին։

ՏԵԱՆՑԶԻՆ։ Առաջին գնացքը ճանապարհ ընկաւ Պէկին եւ տարաւ 650 անգլիացիներ, 100 ամերիկացիներ, 40 իտալացիներ, 25 աւստրիացիներ, Գոկշիսի մէկ թնդանօթ եւ շատ ուրիշ թնդանօթներ։ Երկրորդ գնացքում կային 600 զինուորներ—ռուսներ, անգլիացիներ, եապօնացիներ եւ ֆրանսիացիներ։

ԳԱՆՍՖԼԷՑ։ Բուլէրի ոյժերը գնացին հիւսիս-արեւելեան ուղղութեամբ եւ բանակ դրեցին Տրանսվալի եւ Օրանժեան հանրապետութեան սահմանի վրա։ Անցնելով ութ ժոն, նրանք դիմադրութեան հանդիպեցին, բայց բօէրները յետ քաշվեցին, երբ կուին ժամանակցեց բրիտանական ծանր արտիլէրիան։ Ցետոյ բօէրները կրկին դիմադրութիւն ցոյց տուին Նագսֆլէյի մօտ գտնվող լեռնաշղթայի վրա։

ՊԱՐԻԶ։ Ուսերտոս թագաւորը կը ժամանի Պարիզ յուլիսի սկզբին Նէապօլիտանեան պրինցի ուղեկցութեամբ։

ՊԷԿԻՆ։ Օտարահպատակների դէմ սկսված թշնամական անկարգութիւնները չեն պակասում։ Փողոցում չինական զինուորները յարձակվեցին բելգիական դեսպանութեան քարտուղարի վրա եւ սաստիկ ծեծեցին նրան։ Տունչժօում ապստամբներն այրեցին ամերիկական միսսիան։ Դէպի երկաթուղին հաւաքված են օգնական զօրքեր, որոնց սպասում են այստեղ ոչ ուշ վաղվանից։ Տեանցզինի գեղմանական պաշտպանութիւնը ուժեղացրած է. ճանապարհի վրա դէպի այստեղ գտնվում են մի քանի հարիւր գերմանական զինուորներ Տեանցզինից. նրանց ետեւից այնտեղից գալիս են այստեղ ուրիշ ազգերի 1450 զինուորներ։ Ապստամբների ձեռքով այրված ամերիկական միսսիայում, Տունչժօում, սպանված են 40-ից աւելի տեղացի քրիստոնեաներ։

ՇԱՆԳՀԱՑ։ Երկաթուղին Տեանցզինից մինչեւ Պէկին ուղղում են օտարազգի զօրքերը թնդանօթների պաշտպանութեան տակ։ Երբ աշխատանքը կը վերջանայ, զօրքերի մեծամասնութիւնը կուղարկվի Պէկին։

ԼՕՆԴՕՆ։ Բուլէր հեռագրում է, որ բրիտանական ոյժերը կենտրօնացան Կլիպ եւ Գանալէյ գետերի վրա եւ առաջեցին թշնամու երեք հազար մարդուց բաղկացած զօրաբաժնին, որ կամենում էր գրաւել անցքը։ Թեթեւ հարաւաֆրիկական հեծելազօրքը եւ բրիգադն պատերազմ ունեցան. կորուստները—մօտ վեց սպանվածներ եւ 7 վիրաւորվածներ։

ԲԱԳՈՒ։ Նաւթարդիւնաբերողների ժողովը փակվեց։

ԼՕՆԴՕՆ։ Պաշտօնապէս։ Մայիսի 24-ին պատերազմ սեղի ունեցաւ Ռէդէվալի մօտ։ Դէրբշիրեան գնդի 4-դ բատալիօնից սպանված են 15 զինուորներ եւ երկու օֆիցէր. գերի են առնված 71 զինուորներ եւ 5 օֆիցէրներ։—Թէտուէն մայիսի 25-ին պատերազմ սկսեց իր դիվիզիայի գլխաւոր ոյժերով տասը մղոն դէպի հարաւ Գէյլբրօնից։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Կէլիկէնի հաղորդում է, որ Մէտուէն իր դիվիզիայի մեծ մասով պատերազմ ունէր 10 մղոն հեռու Գէյլբրօնից, ուր Կալվիլ կանգնած էր հայլէնդէրների բրիգադայով։ Մէտուէն դուրս եկաւ Լինդլէյից մայիսի 23-ին մեծ պաշարներով եւ Լինդլէյում թողեց Պէդժէտին ինքնապաշտպանութեան համար։ Կէլլիկէնի հրամայեց գնդապետ Կօկին յարձակում գործել թշնամու ամրութիւնների վրա, որովհետեւ կարծում էր թէ թշնամու ոյժերի մասին տեղեկութիւնները չափազանցրած են։ Այժմ ամեն ինչ հանգիստ է. երկիւղներ չը կան Շրջանի հարաւային մասի վերաբերմամբ, բայց հարաւային մասի հաղորդակցութիւնը Կրոնշտատի հետ կտրված է։—Կապշտատից հաղորդում են դէրբշիրեան գնդի կորուստների մասին։ Շատերը ծանր վիրաւորված են. 4-րդ բատալիօնից ազատվեցին միայն 6 մարդ։

ԹԷՀՐԱՆ։ Ջավանրօդից հաղորդում են, որ վերջին վեց շաբաթների ընթացքում այնտեղ ժանտախտի միայն մի դէպք է եղել։

ՊԷԿԻՆ։ Հրատարակած հրովարտակը հրամանագրում է զինուորական նահանգապետին հսկողութիւն ունենալ հանգստութեան պահպանութեան վրա փողոցներում հեծելազօր եւ հետեւակ զօրքերի օգնութեամբ։ Փողոցը, ուր դեսպանութիւններն են գտնվում, լցված է, սակայն, խառնիճաղանճ ամբոխով, որը ամենաչնչին պատճառով պատրաստ է չարագործութիւններ անել։ Փորձված մարդիկ վախենում են նրանից, որ «Մեծ բռունցքի» շարժումը աճում է, թէպէտ խանութների կողոպուտ դեռ եւս չէ պատահել։ Կայսրը եւ կայսրուհին վերադարձան ամարային պալատից, որը լաւ նշան է համարվում։ Անգլիական դեսպանը, մեթոդիստների միսսիան պաշտպանելու համար, ուր հաւաքվեցին բոլոր ուղղութիւնների բողոքականները, ուղարկեց 12 նաւատիներ. ամերիկական դեսպանութիւնից ուղարկված են 20 նաւատիներ։

ՏԵԱՆՑԶԻՆ։ Տեանցզինի հեռագրական հաղորդակցութիւնը Պեկինի հետ ընդհատված է։ Դադարած է երթեւեկութիւնը չինական հիւսիսային բոլոր ճանապարհների վրա։ Զը կարողանալով փոխարքայից թոյլտուութիւն ստանալ երրորդ արտակարգ գնացք ուղարկելու համար Պէկին, զօրքերը նստեցին վագոնները, բայց չինացի սեքենավարը գնաց շոգեկառքով, իսկ երկաթուղիական մնացած ծառայողները րէլսերը բարձրացրին։ Օտար պետութիւնների զօրքերը սուլիներով դուրս արին չինացիներին եւ տիրեցին շոգեկառքին։ Փոխարքան իմանալով այդ բանը, թոյլ տուեց ուղարկել գնացքը։ Կէսօրին ճանապարհ ընկաւ չորրորդ գնացքը երկու ռուսներով, երկու թնդանօթով, 62 ֆրանսիացիներով եւ մթերքներով ու մի թնդանօթով բրիտանական զօրաբաժնի համար։ Օտար զօրքերը կենտրօնացած են Լանրակի մօտ, 40 մղոն հեռու Պէկինից։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Կէմպֆ հեռագրում է, որ դրութիւնը Չինաստանում ծանր է եւ իրընդրում է ծովային զինուորների մի բատալիօն ուղարկել։ Ծովային մինիստրը հրամանագրեց անյապաղ 100 զինուորներ ուղարկել Կէմպֆին։—Ամերիկական «Մօնակասի» նաւը եկաւ Տակու։

ՎԵՆՏԷՐՍԴՕՐՊ։ Մինչեւ այժմ զէնքեր յանձնեցին 250 բօէրներ։ Կլէրսդօրպի մօտ գտնվող բանակը դատարկվում է։ Ամեն օր սպասվում է բանակի անձնատուր լինելը։

ԼՕՆԴՕՆ։ Պաշտօնական հեռագիրների համեմատ, բրիտանական զօրքերի այն մասը, որ գնում էր Կումասսի ազատելու համար, լուրջ դիմադրութեան հանդիպեց։ Զօրաբաժինը արշաւում էր Դոմպժոսսի վրա, ուր ապստամբները գրաւած ունէին զօրեղ դիրք։ Ապստամբները յետ մղվեցին, բայց, կորուստների պատճառով, զօրաբաժինը այլ ես կարողութիւն չունի առաջ գնալ։ Զօրաբաժինը վերադարձաւ։ Ապստամբների հետ միացան եւ ուրիշ ցեղեր։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովում Կոչէնի հարցապնդումին՝ չինական գործերի մասին, Դէլկասէ պատասխանում է, որ «ինչ էլ լինեն նրա պատճառները, բայց չինական շարժումը վտանգաւոր դարձաւ բոլոր օտարահպատակների համար։ Հէնց Պէկինում կան հազարներ, որոնք միայն յարմար բոպէի են սպասում, որպէս զի շարժմանը միանան։ Ներկայ բոպէում դեսպանութիւնները արել են կամ կանեն մի քայլ, որպէս զի վերջին անգամ զգացնել տան չինական կառավարութեանը՝ թէ անպայման անհրաժեշտ է կանգնեցնել այդ շարժումը, որը վտանգի է ենթարկում թէ կայսրութիւնը եւ թէ այն շահերը, որոնց հետ հանաք անել չեն թոյլ տայ այդ պետութեանը։ Եթէ այդ հրաւէրը անհետեւանք կը մնայ, այն ժամանակ պետութիւնները ստիպված կը լինեն յոյս դնել միայն իրանց վրա։ Դժբաղդաբար, Չինաստանի հիւսիսը միակ կէտը չէ, որը մեզ հոգս է պատճառում առանձնապէս։ Մի քանի ժամանակ առաջ օտարահպատակների դէմ շարժումը, որը տարածված է հիւսիսում, երեւան եկաւ նոյնպէս եւ հարաւում։ Ամբողջ աշխարհին յայտնի է, որ մեզ չէ տանջում անպտուղ նուաճումներ անելու ձգտումը։ Պատգամաւորների ժողովը կը հասկանայ, որ բարձրագոյն խորհրդաժութիւնները եւ ընդհանուր քաղաքականութեան վերաբերեալ հոգսերը նախապաշտպանում են կառավարութիւնը ամեն տեսակ հրապոյրներից եւ փորձերից, որոնց հետեւանքը կը լիներ մեր ոյժերի բաժանաժանութիւնը, այն ինչ հիմնական շահերը պահանջում են, որ մենք մեր ձեռքի տակ ունենանք նրանց (բուռն ծափահարութիւններ ձախակողմի նստարանների վրա եւ կենտրօնի զանազան նստարանների վրա)։» Հարցապնդումը սպասված է։

ՏԱԳԱՆՐՕԳ։ Զինուորական մինիստրը ժամանեց այստեղ եւ այցելեց Կայսերական պալատն ու Երուսալիմսկի վանքը։

ԼՕՆԴՕՆ։ Զինուորական վարժութիւնների ժամանակ Օլդէրշօտում, սաստիկ շոքի պատճառով, հիւանդացան 300 մարդ. չորսը մեռան։ Սանիտարները ամբողջ գիշեր զբաղված էին որոնելով նրանց, որոնք չը կային։

ՊԱՐԻԶ։ Մինիստրների խորհրդում Լանէսան հաղորդեց, որ Սայգոն են հասել 600 ծովային զինուորներ, որպէս օգնական զօրք Չինաստանում։

ԲԵՐԼԻՆ։ «Գէֆիօն» կրէյսերը եկաւ Տակու։ Կայսերական սէյմը վերջնականապէս ընդունեց մաքսահարկերի եւ հարկերի մեծացնելը եւ նաւատորմին վերաբերեալ օրէնքը։

ԵՕԿՕՀԱՄԱ։ Կօրէյան առաջարկեց յետաձգել եապօնական դեսպանի պահանջած ունկնդրութիւնը այն փախստականին պատժելու գործի առիթով, որը գտնվում էր Եապօնիայի հովանաւորութեան տակ։ Եապօնիան անյապաղ ունկնդրութիւն է պահանջում։

ՊԷԿԻՆ։ Ցունդ-լի-համէնի կազմութեան մէջ փոփոխութիւններ են սկսված. մէկ անդամը հրաժարական տուեց. անդամներ նշանակված են չորս խիստ պահպանողական մանդարիններ. պրինց Չժին, արտասահմանեան գործերի հետ ծանօթ միակ անդամը, փոխարինված է, որպէս եամէնի նախագահ, պրինց Տուանով, թագաժառանգ պրինցի հօրով, որը ամենազօրեղ նպաստողն է «Մեծ բռունցքի»։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Պարլամենտի այն անդամների ընթացքը, որոնք պատկանում են ազիրիկանդէրների դաշնակցութեան եւ որոնք զրկեցին Շրէյներին իրանց օգնութիւնից, առաջ բերեց սուր մինիստրական ճգնաժամ։ Շրէյներ, Սալիսբուրի եւ Գէրգօլդ հրաժարական են տալիս։ Միլների դէպի հիւսիս գնալը յետաձգված է։

ՄԱՍՍԷՐՈՒ։ Մի փախստական զինուոր հաղորդում է, որ Բեթղեհէմեան չրջանում գրանվում են 7000 բօէրներ։ Բոյկրանցի մօտ տեղի ունեցած վերջին կռիւ մէջ սպանվեց հրամանատար Օլիվիէ եւ մահացու կերպով վիրաւորված է հրամանատար Դէվիլիէր։ Նախագահ Շտէյն անցեալ շաբաթն այցելեց բօէրների բանակը Բեթղեհէմի մօտ։ 1500 բօէրներ անձնատուր եղան գեներալ Բրաբանտին։

ՄԷՔԿԻՆԴ։ Առաջին գնացքն եկաւ գիշերը հարաւից։

ԼՕՆԴՕՆ։ Բուլէրի հեռագիրը գլխաւոր բանակից Նատալում. Գիլիարդ գրոհ տալով վերցրեց Ալմոնդէնկ, վերջին անցքը Կարլստաունի առաջ։ Թշնամին բաւական բազմաթիւ էր եւ մի քանի թնդանօթներ ունէր։ Զախ թեւից նրանք ենթարկվեցին յարձակման շատ դժուար տեղում։ Անգլիացիների կորուստները հասնում են հարիւր մարդու։

Կ. ՊՕԼԻՍ։ Սուլթանն առաջարկեց զինուորական մինիստրին անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել ընդհարման առաջն առնելու Թիւրքսերբիական սահմանի վրա։ Զինուորական մինիստրը տեղեկացրեց այդ մասին սերբիական դեսպանին մի նկատողութեամբ, թէ դիտաւորութիւն ունի ուղարկել դէպի սահմանը շատ լաւագոյն օֆիցէրներ։ Սերբիական դեսպանը առաջարկեց փոխարինել ալբանական սահ-

մանագլխային զօրքերը անգլիական զօրքերով եւ յայտնեց, որ նրա կառավարութիւնը, իր կողմից, ձեռք կառնի համապատասխան միջոցներ։

Հայոց պատրիարքը ստացաւ կայսերական իրադէ, որով բաւարարութիւն է տրվում նրա ցանկութիւններին, այն է յետաձգել այն հարկերի վճարումը, որ տալիս են հայերը զինուորական ծառայութիւնից ազատվելու համար։

31 մայիսի

ԼՕՆԴՕՆ։ Կելլիկենի հաղորդում է Բլումֆոնտէնից. «Յունիսի 7-ին ես ոչինչ տեղեկութիւն չը ստացայ Մեռուէնից, որը յունիսի 6-ին Ֆեխտկոպից դէպի հիւսիս կուի բռնվեց»։ Նախագահ Շտէյն գտնվում է Բէյց աւանում, Լինդլէյի մօտ։ Վրեդէ ուղարկված անգլիական գերիների հետ լաւ են վարվում։ Բրիտանական զօրքերը, որոնք շարժվում էին հիւսիսային ուղղութեամբ, հասան Գոնինգսպրույտին, ուր ընդհարում ունեցան բօէրների հետ։ Կնօկս ուղեւորվեց Կրոնշտատից՝ բօէրների նահանջման ճանապարհը կտրելու համար։ Բուլլեր հեռագրում է. «Ես բանակ դրի Ֆոլկսրուստից 4 մղոն հեռու։ Բօէրները հեռացան Լենգանէկից եւ Մաիւբայի բլուրներից»։

ԱԿՐԱ։ Տարածվեցին չարագուշակ լուրեր. ազատելու համար ուղարկված զօրասիները Պրօխի մօտ հանդիպեցին աշանտիերին, որոնք հաւաքվել էին զօրեղ դիրքի վրա։ Տեղատարափ անձրեւը արգելք է դառնում Պրօխից դէպի հարաւ գտնվող գլխաւոր ազատարար զօրասիների յարձակողական շարժմանը։ Կումասիի վիճակի մասին ոչինչ լաւ բան չեն ապասում։

ԼՕՐԵՆՑՕ-ՄԱՐԿԵԶԻ։ Այստեղի տրանսվաալեան հիւպատոսը պաշտօնապէս յայտնեց, որ բօէրները յետ վերցրին Բլումֆոնտէն։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովի բիւրօն առանձին յանձնաժողով նշանակեց ներման նախագիծը ուսումնասիրելու համար։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Զինկիանգի ամէրիկական հիւպատոսը հեռագրում է, որ քաղաքի մօտ կանգնած են բազմաթիւ տեղացիներ, որոնք պատկանում էին գաղտնի ընկերակցութեանը։ Քաղաքում երկիւղ է տիրում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը Պետերբուրգի հաշով)
տարբերութիւնը 58 րոպէ։

№ 5 գնացքը։

Բաղուից դուրս է գալիս	ցեր. 4 ժ. 1 ր.	գիշ. 11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում	առ. 8 » 53 »	եր. 5 » 34 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 9 » 32 »	եր. 6 » 34 »
Բաթում է հասնում	եր. 9 » 1 »	առ. 7 » 14 »

№ 3 գնացքը։

№ 6 գնացքը։

Բաթումից դուրս է գալիս	առ. 7 ժ. 50 ր.	եր. 7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում	եր. 7 » 15 »	առ. 8 » 42 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 7 » 18 »	» 10 » 05 »
Բաղու է հասնում	ցեր. 12 » 10 «	» 5 » 16 »

№ 4 գնացքը։

արագ գնացք

Թիֆլիսից դուրս է գալիս	ցեր. 11 ժ. 19 ր.
Բաթում է հասնում	երեկ. 9 » 41 »
Բաթումից դուրս է գալիս	գիշ. 11 » 18 »
Թիֆլիս է հասնում	առաւ. 9 » 30 »

—

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս	երեկ. 9 ժ.	—
Ալէքսանդրոպոլ հասնում է	առ. 7 »	46 ր.
Կարս հասնում է	ցեր. 12 »	56 »
Կարսից դուրս է գալիս	ցեր. 3 »	29 »
Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս	երեկ. 8 »	35 »
Թիֆլիս հասնում է	առ. 7 »	15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Ն. Ծպակօվսկի—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի հ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ն. Ծպակօվսկի—6—7 ժ. նեարդային (էլեքտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վ. Մ. Մախվիլաձէ—քիմիական և խոշորացուցական հեռադիտութիւն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ց. Առվանիսակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՀՄՈՒՏ ՀԱՇՈՒԱՊԱՀ

Մոսկվայում աւարտած՝ ընդհանուր առեւտրական, բանկային, գիւղատնտեսական, արդիւնաբերական, գործարանական մասնաճիւղ. տեղ է որոնում։ Авчальская, 77. бухгалтеру.

(հ. չ) 1—2

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑ ՆՈՐ ՄՏՆՈՂ

եւ վերաքննութիւն ունեցող աշակերտներին

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՄ

էժան գներով

ինչպէս վերոյիշեալ դպրոցի, նոյնպէս ծխական ուսումնարանների համար։ Հարցնել՝ քարվանսարայ Թամամշեվի, «Կավկազ» հիւրանոցի հանդէպ, Եղ. Սուլեանցներին։ 3 3

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼՑԻ ՄԻ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԻ ԿԻՆ

Թողնելով 4 որբ երեխայ մեռաւ։ Դժբաղդ արհեստաւորի համար շատ դժուար է ամենից փոքրին խնամելը, ուստի ցանկանում է տալ նրան մի բարի մարդու իբրեւ որդեգիր, որպէս զի ինքը կարողանայ աշխատել եւ միւս երեքին պահել։ Երեխան երկու տարեկան տղայ է։ Հասցէն՝ Մուխրանսկի փողոց, Մելնիչնի պերեուլօկ № 5, Ենօք Ալանեանց։ 3—3

Մի հայ օրիորդ, որ աւարտել է միջնակարգ դպրոցում եւ պաշտօն է վարել երկար տարիներ հայ դպրոցներում եւ ընտանիքներում, ցանկանում է հայ ընտանիքում դասեր գտնել ամարանոցում։

Հասցէն՝ Էժանագին գրադարան Вельяминовская ул. 2—3

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ

ԲԺ. ՎԱՀ. ԱՐԾՐՈՒՆԻՆ

ընդունում է հիւանդներին առաւ. ժամը 8—12.

Հասցէն՝ Нижный бульваръ, д. Фидлера. рядомъ армянск. церкви. 2—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է, որ նրա դիւանատան մէջ 1900 թուի յունիսի 5-ին, ժամը 12-ին նշանակված է աճուրդ Նիկոլաեվսկի փողոցում, 9 քաղաքամասում կապալով տալու քաղաքային կշեռքների հարկերի հաւաքումը։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան 4 բաժնում բոլոր լի օրերը, ժամը 9-ից մինչեւ 2-ը։

2—3

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍԻ 4-ԻՆ

Ալէքսանդրեան ուսուցչական ինստիտուտի մասնաժողովը, դպրոցի ֆօնդը աւելացնելու նպատակով կազմակերպում է Մուշտայիդի այգում

ԶԲՕՍԱՆՔ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՔԷՖ

Երաժշտութեամբ եւ տօնավաճառով

Սկիզբը 2 ժամին ցերեկվայ։

Մուտքը 20 կոպէկ։ Վատ եղանակին զբօսանքը կը յետաձգվի մինչեւ հետեւեալ կիրակի։

2—3

Աւարտելով Կարա-Մուրզայի խմբագիտական կուրսերը եւ լիմանալով եկեղեցական բոլոր արարողութիւնները, ցանկանում են պաշտօն ստանալ։

Կարապետ Պապեան, Յովսէփ Վախդանդեանց. Հասցէն՝ Тифлисъ, Таможенная ул. церковь Сурбъ-Саркисъ І. Вахтангянцу, К. Папьянцу. 2—3

Պարսկահպատակ, Սաւրի գիւղից, Մովսէս Խալաթեանը շատ տարի է անյայտացել Ռուսաստանում. մինչեւ այժմ ողջութեան լուրը առած չենք։ Ամուսնացած, առանց որ եւ է արհեստի, 24 տարեկան, կարճահասակ եւ բարակազմ, խոշոր սեւ աչքերով մի մարդ է, ուստի տեղեկութիւն ունեցողներին խոնարհաբար խնդրում եմ յանուն ազգութեան հաճեն իմացնել հետեւեալ հասցէով. Ростовъ На Дону, большая Садовая улица, магазинъ Ивана Рустамова, Николаю Авакянцу.

2—3

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

«ՄԻՋՆՈՐԴ»

(Посредникъ)

Դ. Ի. ԵԱԿԻՄՕՎԻՉԻ

Պուշկինեան պասաժ, Թամամշեվի քարավանսարայի հանդէպ։

Հրաւիրում է պ.պ. տանտէրերին հաղորդել մանրամասն հասցէ ազատ բնակարանների (դրա համար վերցնվում է 20 կոպ.), որ շատ դիւրութիւն կը պատճառէ թէ տանտէրերին եւ թէ բնակարան վարձողներին։ Այդ նպատակով պատրաստված է մանրամասն ցուցակ։ Գրասենեակում կայ ազատ բնակարանների մեծ ցուցակ։ Ցանկացողները թող դիմեն գրասենեակ։

№ 1. 0—33

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 7/20 յունիսի ՄԻՆԴՐԻԷԼԻ շոգենաւը, նաւապետ ՇԻԼՏ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվն, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխօվի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկօվի, № 27։ ՆՕՎՈՐՕՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (հ. հ. չ.) 8—20



Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆՑԻ

աւտօ էլէվատորը գիշեր-ցերեկ ԻՆՔՆ ԻՐԱՆ ջուր է բարձրացնում ցածր տեղերից վերեւ։ Դիմել՝ Л. Ханъ-Агову, Тифлисъ, Великокняжеская ул., 37.

Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆՑԻ

Գիւղատնտեսական մեքենաներ 250 նկարով. վաճառականների մօտ 50 կոպէկ։ 12—30

1847 թուին հիմնված Ս. Պետերբուրգի

„ՆԱԴԵԺԴԱ“

Ընկերութեան վարչութիւնը սրանով յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, թէ «Նադեժդա» ընկերութիւնը

1) Իր կարգադրութեանտակ առնելով «Ա. Ա. Զէվէկէ» ընկերութեան բոլոր շոգենաւերը, նաւամատոյցները եւ դեբարկադէրները՝ այժմ ընդարձակ նաւատորմ ունի բեռներ տեղափոխելու համար Վոլգայի ամբողջ տարածութեան վրա՝ սկսած Ռիբինսկից մինչեւ Կասպից ծովի նաւահանգիստները եւ դրանով ապահովեցնում է իր կլիենտներին բեռների արագ եւ ճիշդ տեղափոխութեամբ յիշեալ ջրային ճանապարհով։

Այս նպատակին անչուշտ հասնելու համար, ընկերութիւնը 1900 թուի նաւարկութեան սեզօնում սահմանում է կանոնաւոր նաւային հաղորդակցութիւն Ռիբինսկի եւ Աստրախանի Կասպից ծովի նաւահանգիստների մէջ։ Այդ նաւային հաղորդակցութեան օրացուցակը կը հրատարակվի առանձին։

2) Ընդունում է ռուսաց պետութեան համարեա բոլոր քաղաքներում բեռներ՝ տեղափոխելու եւրոպական եւ ասիական Ռուսաստանի, նոյնպէս եւ արտասահմանի զանազան տեղերը։

3) Ապահովագրում է որպէս ցամաքային եւ ջրային ճանապարհներով տեղափոխվող բեռները, այնպէս էլ պահեստներում գտնվողները։

4) Ընդունում է ապահովագրութիւն հրդեհից, որպէս անշարժ, նոյնպէս եւ շարժական կայքերի։

5) Ընդունում է ապահովագրութիւն պօստով ուղարկվող արժէքաւոր իրերի։

«Նադեժդա» ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտէյսկի պրօսպէկտի վրա, 102-րորդ տան մէջ (С. Петербургъ, Адмиралтейскій проспектъ д. № 112)։

Շոգենաւային գործերի լիազօրների գրասենեակները գտնվում են—ա) Վոլգայի շոգենաւային գործերի՝ (լիազօր Ալէքսանդր Ալիֆոնսօվիչ Զէվէկէ) Նիժնի-Նովգորոդում, Նիժնի-Նաբերեժնայա փողոցի վրա, Բուկալիչնիկօվի տանը, բ) Կասպից ծովի շոգենաւային գործերի՝ (լիազօր Վլադիմիր Կոնստանտինօվիչ Կոզլենկո), Բաքուում, Կայսր Ալէքսանդր II-ի ծովափի վրա, «Նադեժդա» ընկերութեան սեփական տան մէջ։ Թիֆլիսի ագենտատվօն գտնվում է Դվօրցովի փողոցի վրա, վրաց ազնուականութեան տնի մէջ։ 9—10



ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ

Լուսաց և արտասահմանեան ֆիրմաների։

ԲԻՒՐՕՆ ՅԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ

կառուցանել

Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և դործատներ

ԳԱԶԱ-ՇՈԳԻՒ-ՋՐԱՆՑՔՆԵՐ

Ամեն տեսակ էլէկտրոտէխնիկական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տելեֆոնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա։

ՇԻՆԵՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՒՐՕ

Ինժեներ Ն. Բ. Պասսէկի

Тифлисъ, Михайловская ул. № 116.

Հասցէն հեռագիրների համար. Тифлисъ—Пассеку.

ՏԵԼԵՖՕՆ № 642.



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԵՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄՔ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ

ամեն տեսակ

տիրոջներ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ։

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ

երկաթէ կամուրջներ

և տնակներ։

ՑԷՄԷՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

(հ. հ. չ.)

Дозволено цензурою, Тифлисъ, 31 Мая 1900 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.